ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 255Ա):
- ***Լուծարվել և գործունեությունը դադարած է համարվել*** «էկոնոմինվեստ բանկ» բաց բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկը (որոշում թիվ 256Ա):
- ***«Վիզա» և «Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշումներ թիվ 259Ա, 270Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Առգասար Գրուպ» և «Գարի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների արտարժույթի առուվաճառք իրականացնելու և «Աստիկ Ֆլորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 260Ա, 265Ա, 261Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Կապիտալ պլյուս», «Ամուսի Կրեդիտ» և «Ս.ՈՒ.Ր.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 262Ա, 264Ա, 275Ա):
- ***Գրանցվել և լիցենզավորվել են*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը, ինչպես նաև «Պրոկրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տիգրան Մեծ» մասնաճյուղը (որոշումներ թիվ 266Ա, 1/1209Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Բիզնես Լիդեր Հոլդինգ» և «Վ.Ա.Ս. Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փոխանակման կետերի համապատասխանաբար թիվ 2 և թիվ 1 մասնաճյուղերին, ինչպես նաև «Գնթունիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 272Ա, 273Ա, 274Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար «Նոր-սազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 80000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/1126Ա) և 3 արտարժույթի փոխանակման կետերի, 2 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1116Ա, 1/1185Ա, 1/1186Ա, 1/1117Ա, 1/1118Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով իրավաբանական անձանց կողմից իրենց կանոնադրություններն օրենսդրությամբ սահմանված դեպքերում տարբեր մարմինների կամ անձանց տրամադրելու գործընթացն առավել դյուրին դարձնելու միջոցով նպաստելու Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի թիվ 636-Ն որոշման 1-ին մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը հաստատելու մասին» թիվ 240-Ն որոշմամբ հաստատված «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի 5-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) սույն կանոնակարգի 5-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հայտում հայտատուին վերաբերող տեղեկությունների շարքում նշվում է վճարահաշվարկային կազմակերպության պետական գրանցման համարը: Ընդ որում, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով սահմանված կանոնադրությունը երեք օրինակից ներկայացնելու պարտավորությունը համարվում է կատարված:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 սեպտեմբերի 2011 թ., N241-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. սեպտեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.10.2011 թ. (ՀՀԳՏ N24 (407), 17.10.2011):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով իրավաբանական անձանց կողմից իրենց կանոնադրություններն օրենսդրությամբ սահմանված դեպքերում տարբեր մարմինների կամ անձանց տրամադրելու գործընթացն առավել դյուրին դարձնելու միջոցով նպաստելու Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի թիվ 636-Ն որոշման 1-ին մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ը հաստատելու մասին» թիվ 241-Ն որոշմամբ հաստատված «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ի 6-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) սույն կանոնակարգի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հայտում հայտատուին վերաբերող տեղեկությունների շարքում նշվում է վճարահաշվարկային կազմակերպության պետական գրանցման համարը: Ընդ որում, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով սահմանված կանոնադրությունը երեք օրինակից ներկայացնելու պարտավորությունը համարվում է կատարված:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 սեպտեմբերի 2011 թ., N 242-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. սեպտեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.10.2011 թ. (ՀՀԳՏ N24 (407), 17.10.2011):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպելու առևտրային բանկերում թղթադրամների փաթեթավորման և վճարունակության ստուգումների գործառնությունների իրականացումը և անվտանգության ապահովումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և 45-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի ենթահավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը» աղյուսակի «Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ» սյունակը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ	
1000 դրամ (2011 թ.)	136 x 72

2) Կանոնակարգի ենթահավելված 13-ի «Հայաստանի Հանրապետության թղթադրամների կապոցների վրադիրների չափերը» աղյուսակի «Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ» սյունակը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ	
1000 դրամ (2011 թ.)	136 x 72

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
28 սեպտեմբերի 2011 թ., N 245-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. սեպտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.10.2011 թ. (ՀՀԳՏ N24 (407), 17.10.2011):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 8-ի նիստի «2011 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 15

Իրական հատվածի ցուցանիշներ 18

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 21

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 26

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 27

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 39

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 61
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 74
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 76
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 82
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (08.11.2011)

2011 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի նոյեմբերի 8-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Չիլինգարյանը, Ա. Դարբինյանը, Ա. Մկրտչյանը, Օ. Աղասյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստում, որը նոյեմբերին համընկավ Դրամավարկային քաղաքականության 4-րդ եռամսյակի ծրագրի քննարկումներին, ներկայացվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թվականի հոկտեմբերին 12-ամսյա գնաճը նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 5.7%՝ ընդհուպ մոտենալով 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին: Պարենային ապրանքների գնաճի նպաստումն ընդհանուր գնաճին գերակշռել է՝ 12-ամսյա կտրվածքով կազմելով 4.6 տոկոսային կետ, որից միայն 3.3 տոկոսային կետը բաժին է ընկել մսամթերքին (1.4 տոկոսային կետ), կաթնամթերքին (0.8 տոկոսային կետ), կենդանական և բուսական յուղերին (0.6 տոկոսային կետ), շաքարավազին (0.5 տոկոսային կետ): Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների նպաստումը կազմել է յուրաքանչյուրը շուրջ 0.6-ական տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.3% գնաճ, որին 0.2 տոկոսային կետով նպաստել է պարենային (հիմնականում՝ վերոնշյալ ապրանքների) և 0.1 տոկոսային կետով՝ ոչ պարենային ապրանքների (հիմնականում՝ կոշկեղենի, հագուստի) գների աճը:

2011 թվականի սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 9%, իսկ հունվար-սեպտեմբերին՝ 6.4%: Աճն ամբողջությամբ արդյունք է տնտեսության բոլոր ճյուղերում (բացառությամբ՝ շինարարության ճյուղում) արձանագրված թողարկման ծավալների աճի: Արդյունաբերության ճյուղում թողարկման ծավալների աճը կազմել է 13%, գյուղատնտեսության ճյուղում՝ 15.3%, որը պայմանավորվել է բուսաբուծության ենթաճյուղի 28.9% աճով: Ծառայությունների ծավալներն աճել են 5.8%-ով, առևտրի ծավալները՝ 3.3%-ով: Շինարարության թողարկման ծավալների 20%-ով անկման պատճառը, նախորդ տարվա համեմատությամբ, միջազգային վարկերի, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումն է, որը փոքր-ինչ մեղմվել է պետական բյուջեի, համայնքների միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով:

Ըստ արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշների՝ փոքր-ինչ արագացել և գերազանցել են սպասումները ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման աճի տեմպերը՝ կազմելով համապատասխանաբար 33.5% և 12%:

Հարկաբյուջետային հատվածում ևս շարունակվել են տարեսկզբի միտումները. արձանագրվել են տնտեսումներ Կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնությունների նկատմամբ, որոնք գնաճային միջավայրի վրա թողնում են չափավոր զսպող ազդեցություն:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 0.11 տոկոսային կետով՝ կազմելով 9.60%, իսկ միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ 0.07 տոկոսային կետով՝ կազմելով 9.26%: Մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատությամբ միջին տոկոսադրույքն աճել է 0.24 տոկոսային կետով և կազմել 8.3%:

2011 թ. հոկտեմբերին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատությամբ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.17%-ով՝ կազմելով 376.69 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 0.72%-ով՝ կազմելով 517.11 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորվել է 0.58%-ով՝ կազմելով 12.07 դրամ: Նախորդ տարվա հոկտեմբերի համեմատությամբ դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 3.22%-ով, եվրոյի նկատմամբ՝ 2.52%-ով և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 2.22%-ով:

Ֆինանսական շուկայի նկարագրված զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշները հոկտեմբերի վերջի դրությամբ արձանագրել են հետևյալ միտումները. 12-ամսյա կտրվածքով դրամային և փողի զանգվածներն ավելացել են գրեթե նույն չափով՝ 27%-ով, և չնայած դրան՝ դրամային ավանդների 43% աճն էապես գերազանցել է արտարժութային ավանդների շուրջ 26% աճը (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ շուրջ 20%): Արդյունքում, դոլարայնացման մակարդակը նվազել է 0.8%-ով: Պահպանվել է նախորդ ամիսներին գրանցված դրամով վարկավորման աճը՝ 12-ամսյա կտրվածքով շուրջ 25%, որը սակայն դեռևս զիջում է արտարժույթով վարկավորման 38% աճին (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը): Վարկավորման 12-ամսյա աճը կրկին արագացել է և կազմել 38%՝ նախորդ ամսվա 33.9%-ի փոխարեն: Հոկտեմբերի վերջի դրությամբ վարկավորման ամսական աճը կազմել է 1.7%: Ամսական կտրվածքով դրամավարկային ցուցանիշների շարժերը համընթաց էին 12-ամսյա միտումներին:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը շարունակեց քննարկումները արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում առավելապես արձանագրվել են գնանկումային միտումներ: Արդյունաբերական մետաղների կտրուկ նվազել է պղնձի գինը՝ անցած ամսվա ընթացքում 11%-ով, պարենային ապրանքների շուկայում նվազել են բոլոր հիմնական ապրանքատեսակների գները: Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակված պարենային ապրանքների գների ինդեքսը հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, նվազել է 4%-ով, որի արդյունքում 12-ամսյա պարենային ապրանքների գների աճը համաշխարհային շուկայում կազմել է 5.5%:

ԱՄՆ-ում շարունակվող գնաճային զարգացումների (սեպտեմբերին գնաճը կազմել է 0.3%, 12-ամսյա գնաճը՝ 3.9%), բարձր գործազրկության, ինչպես նաև երրորդ եռամսյակում արձանագրված սպասվածից արագ տնտեսական աշխուժացման (ըստ նախնական գնահատման՝ 2.5% տնտեսական աճ) պայմաններում ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը կրկին ձեռնպահ է մնացել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների բարձրացումից և հնարավոր է համարում երրորդ քանակական ընդլայնումը՝ տնտեսական աճի խթանման նպատակով:

Թեև Եվրոգոտու գնաճը շարունակում է մնալ նպատակային 2%-ից բարձր՝ 12-ամսյա կտրվածքով 3%, Եվրոպական կենտրոնական բանկը տևական դադարից հետո նոյեմբերի 3-ին որոշեց իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 բազիսային կետով՝ սահմանելով 1.25%: Տոկոսադրույքի նվազեցումը հիմնականում նպատակա-

ուղղված է տնտեսական աճի խթանմանը, քանի որ տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերը զգալիորեն աճել են, և սպասվում է, որ ներքին գնաճային ճնշումները թույլ կլինեն:

Խորհուրդն առավել հավանական է համարում, որ կանխատեսվող ժամանակահատվածում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը կդանդաղեն, և առաջարկի կողմից ցնցումներ չարձանագրելու դեպքում միջազգային ապրանքային շուկաները հիմնականում կլինեն հավասարակշռված: Այս պարագայում ՀՀ տնտեսություն ներթափանցող գնաճային ճնշումներ չեն նկատվի: Միաժամանակ, դեռևս պահպանվում են զարգացած երկրների մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունավետության անորոշությունները:

2011 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա գրեթե չեզոք ազդեցություն, այդուհանդերձ այն բնութագրվում է զսպող՝ հաշվի առնելով նախորդ եռամսյակների զսպողական քաղաքականության լագային ազդեցությունները: Հաշվի առնելով նաև աշխատանքի շուկայի թույլ գնաճային ճնշումները և մասնավոր ծախսումների չեզոք ազդեցությունը՝ գնահատվում է, որ ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը գնաճային միջավայրի վրա կլինի թույլ գնանկումային: 2012 թվականին հարկաբյուջետային հատվածը ներքին պահանջարկի վրա կշարունակի ունենալ թույլ զսպողական ազդեցություն՝ իր վրա կրելով 2011 թ. զսպող հարկաբյուջետային քաղաքականության լագային ազդեցությունները: Հաշվի առնելով նաև մասնավոր ծախսումների և աշխատանքի շուկայի կողմից թույլ գնաճային ճնշումները՝ գնաճային միջավայրի վրա ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը գնահատվում է չեզոք: ***Խորհուրդը գտնում է, որ աշխատանքի շուկայի և համախառն պահանջարկի արձանագրված և սպասվող զարգացումները գնաճային միջավայրի վրա էական ճնշումներ չեն ձևավորի ինչպես 2011 թվականի չորրորդ եռամսյակում, այնպես էլ 2012 թվականի առաջին երեք եռամսյակներում:***

Խորհուրդն ամփոփեց, որ իրականանում են 2011 թվականի Դրամավարկային քաղաքականության ծրագրերի կանխատեսումները գնաճի նվազող հետագծի և կանխատեսվող հորիզոնում 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում ձևավորվելու վերաբերյալ: Այս պարագայում առաջիկայում դրամավարկային քաղաքականության ուղղությունների փոփոխություն չի պահանջվում, և առավել նպատակահարմար է չեզոք դրամավարկային քաղաքականության իրականացումը: Միաժամանակ, կախված Դրամավարկային քաղաքականության ծրագրերում նախանշված ռիսկերի դրսևորման չափից և ժամկետներից, չի բացառվում դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունների ճշգրտումը:

2011 թվականի նոյեմբերի 8-ի նիստում Խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվամում	*2011թ. սեպտեմբեր*	*2011թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2011թ. հոկտեմբեր*	*2011թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	109.0	-	102.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	92740.8	116.6	88738.8	114.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	486.5	84.2	461.8	95.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	169042.7	118.6	117112.8	107.7
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	188603.6	101.7	182091.8	102.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	49144.7	74.8	46230.6	75.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	79012.0	103.5	79345.3	107.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	114060 [1]	100.5 [2]	114402 [1]	101.0 [2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1213.1		1182.8	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	71.4		70.6	
Գործազրկության մակարդակը *(%)*	5.9		6.0	

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4[1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9[1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
Ապրիլ	99.8	100.3	104.2	102.0
Մայիս	100.0	98.7	97.9	97.4
Հունիս	98.6	100.1	100.4	86.1
Հուլիս	97.0	96.9	98.9	78.5
Օգոստոս	99.4	100.7	101.7	84.8
Սեպտեմբեր	100.8	101.2	99.3	86.2
Հոկտեմբեր	100.3	100.1	100.9	102.7
2011 թ. հունվար – հոկտեմբերը 2010 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	108.3	110.3	97.6	118.4

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4 [1]	3.4 [1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9 [1]	0.9 [1]	11.4 [1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3	-0.2	5.0	8.9
Մայիս	1.6	1.0	0.0	5.0	9.0
Հունիս	-0.3	-0.8	-1.4	3.5	8.5
Հուլիս	-2.7	-0.8	-3.0	0.4	6.3
Օգոստոս	-0.4	1.3	-0.6	-0.2	4.8
Սեպտեմբեր	0.7	-0.2	0.8	0.6	6.2
Հոկտեմբեր	0.5	1.0	0.3	0.9	5.7
Նոյեմբեր	1.2	1.6			
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՄԲԵՐԸ [2]

Անվանում	*2011 թ. հոկտեմբերը 2011 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [2]
ՍԳԻ	**100.3**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**100.3**	**0.16**
Հրուշակեղեն	104.6	0.09
Մսամթերք	100.4	0.04
Ձու	101.1	0.02
Ձկնամթերք	101.0	0.01
Միրգ	98.6	-0.05
Բանջարեղեն և կարտոֆիլ	99.6	-0.03
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.9**	**0.14**
Հագուստ և գործվածք	103.6	0.10
Կոշկեղեն	103.2	0.06
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	100.5	0.01
Ծառայություններ, որից՝	**100.1**	**0.03**
Իրավական և բանկային	117.4	0.13
Տրանսպորտի	98.5	-0.05
Բուժսպասարկման	98.7	-0.05

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2008	2009	2010	2011
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.71[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.42[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.64[4]
Ապրիլ	1.26	1.46	0.70	0.45[4]
Մայիս	0.55	0.41	0.04	0.32[4]
Հունիս	0.30	0.25	-0.22	0.37[4]
Հուլիս	0.02	-0.22	-0.42	0.21[4]
Օգոստոս	0.06	0.37	0.17	0.27[4]
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	0.42[4]
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	0.36[4]
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.28[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	5.75[4]
Մարտ	4.54	3.33	7.14	5.68[4]
Ապրիլ	5.66	3.47	6.35	5.42[4]
Մայիս	5.94	3.37	5.92	5.75[4]
Հունիս	6.47	3.36	5.40	6.32[4]
Հուլիս	6.75	3.20	5.16	6.95[4]
Օգոստոս	6.97	3.52	4.96	7.01[4]
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	7.01[4]
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	6.09[4]
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻ ՆԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**6.09**
Տավարի միս	0.99
Պանիր տնական (կովի կաթից)	0.52
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.37
Կարագ	0.36
Բենզին	0.33
Ձու	0.31
Խոզի միս	0.29
Շաքարավազ	0.27
Պանիր «Չանախ»	0.22
Կարամել	0.15
Աղացած միս	0.15
Աղացած սև սուրճ	0.13
Հավի բուդ	0.11
Ծխախոտ «Գառնի»	0.10
Մածուն	0.10
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.10

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2011 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – սեպտեմբերը 2010 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար – հոկտեմբերը (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – հոկտեմբերը 2010 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	969.7	133.5	1082.6	132.1
Ներմուծում *(ՍԻՖ)*	2979.5	112.0	3370.7	113.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2009.8	103.9	2288.1	105.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – հոկտեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	868243	127046	741197	1114114	172036	942078
ԱՄՆ	99341	86785	12555	124426	108425	16001
Ուկրաինա	16721	17717	-996	20197	20724	-527
Ղազախստան	15252	2707	12545	19845	3082	16763
Գերմանիա	17005	19172	-2168	21175	23861	-2686
Իսպանիա	6300	8868	-2569	8368	10834	-2466
Ֆրանսիա	13248	14857	-1609	17062	18774	-1711
ԱՄԷ	22523	44621	-22097	26198	55500	-29303
Չինաստան	1383	65178	-63796	2068	80011	-77943
Թուրքիա	2103	32388	-30285	2639	40547	-37909
Այլ երկրներ	205169	160699	44470	270964	197761	73203
Ընդամենը	**1267287**	**580039**	**687248**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	129461	16909	112552	1088445	149723	938722
ԱՄՆ	15948	11816	4132	112545	112078	467
Ուկրաինա	1701	2086	-386	22511	21106	1405
Ղազախստան	2091	126	1965	18558	1948	16610
Գերմանիա	1501	2595	-1094	20962	22601	-1639
Իսպանիա	903	809	93	8260	8554	-294
Ֆրանսիա	1341	2044	-703	14940	19924	-4984
ԱՄԷ	1245	6200	-4955	16927	47358	-30431
Չինաստան	149	7459	-7309	2830	66454	-63623
Թուրքիա	1182	2916	-1734	4961	29509	-24548
Այլ երկրներ	23771	16847	6924	248947	171448	77500
Ընդամենը	**179292**	**69808**	**109484**	**1559886**	**650701**	**909185**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – հոկտեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	830062	91587	738475	1062266	116950	945316
ԱՄՆ	53779	19995	33784	67789	24554	43235
Ուկրաինա	16127	11291	4836	19290	13433	5857
Ղազախստան	14025	794	13231	18434	1021	17414
Գերմանիա	8807	4625	4182	10586	5346	5240
Իսպանիա	5403	1745	3658	7232	2286	4946
Ֆրանսիա	7766	2926	4839	9443	3731	5712
ԱՄԷ	3015	5721	-2706	3581	6904	-3323
Չինաստան	498	4958	-4460	789	5970	-5181
Թուրքիա	913	5247	-4334	1182	6246	-5064
Այլ երկրներ	76123	28891	47233	93144	35323	57821
Ընդամենը	1016517	177779	838738	1293736	221763	1071973

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	123682	12175	111507	1031803	113358	918445
ԱՄՆ	7938	2744	5194	60331	22150	38182
Ուկրաինա	1700	1398	302	21089	13515	7574
Ղազախստան	1713	99	1614	16400	1509	14890
Գերմանիա	793	610	183	8868	5723	3145
Իսպանիա	549	204	345	6248	2489	3760
Ֆրանսիա	876	1171	-295	8594	6782	1812
ԱՄԷ	269	754	-485	2672	6186	-3513
Չինաստան	44	1161	-1117	416	7174	-6758
Թուրքիա	108	385	-277	1930	4057	-2126
Այլ երկրներ	7986	3609	4377	79686	31928	47758
Ընդամենը	145658	24310	121348	1238037	214870	1023167





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ[1,2]

2010	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ[3]
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.0	137.8	135.7	135.7	134.7	132.1	134.7	138.6
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.8	223.4	235.0	233.1	231.4	232.5	221.7	228.9	232.8
2011	**Հ**	**Փ[3]**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ[3]**	**Հ[3]**	**Հ[3]**	**Օ[3]**	**Ս[3]**	**Հ[3]**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.4	137.4	133.3	128.2	127.7	126.1	125.5	125.0	128.5	127.1		
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.8	211.8	216.4	217.3	222.1	221.0		

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:
[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000թ.=100)
[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**	**2007.6**	**1955.1**	**1949.3**
Համախառն միջազգային պահուստներ	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**	**2007.6**	**1955.1**	**1949.3**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	33.5	34.0	31.3	31.5	27.4	20.1	16.4	19.5	16.0	15.6	11.1
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1832.3	1783.0	1758.6	1791.9	1738.0	1687.4	1765.6	1856.2	1991.5	1939.5	1938.3

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**699.9**	**710.5**	**714.2**	**721.7**	**734.1**	**719.5**	**716.6**	**744.4**	**748.4**	**726.1**	**753.9**
ԱՄՀ վարկ	487.9	495.3	497.5	502.3	509.1	497.9	495.1	523.2	525.1	510.5	514.1
ՀՓԻ տեղաբաշխում	135.6	137.6	138.5	139.6	142.7	140.9	140.9	140.9	141.7	137.5	139.7
Այլ վարկեր	75.9	77.3	77.9	79.3	81.6	80.1	80.0	79.3	80.6	77.5	99.4
Այլ պարտավորություններ	0.5	0.4	0.4	0.4	0.7	0.7	0.5	1.0	0.9	0.7	0.6


[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարության վերջինիս կարճաժամկետ իրացման պարտավորություններ	կենտրոնական կառավարության վերջինիս երկարաժամկետ իրացման պարտավորություններ	ՇԻԳ-երի միջոցներ կարճով	ՇԻԳ-երի միջոցներ երկարաժամկետով	ընդամենը	
2010								
Դեկտեմբեր	12124	12124	106544	672	1	515	107733	**-95609**
2011								
Հունվար	12236	12236	135069	3168	1	515	138753	**-126517**
Փետրվար	13101	13101	112661	3238	1	521	116421	**-103320**
Մարտ	13608	13608	101877	3334	1	524	105736	**-92128**
Ապրիլ	15806	15806	99035	3458	2	525	103020	**-87214**
Մայիս	16719	16719	90922	3434	1	534	94891	**-78172**
Հունիս	14713	14713	94477	3377	1	523	97856	**-83143**
Հուլիս	14904	14904	111939	4208	1	515	116665	**-101761**
Օգոստոս	13843	13843	109139	4296	8	521	113964	**-100121**
Սեպտեմբեր	15863	15863	111984	3752	1	528	116266	**-100402**
Հոկտեմբեր	15115	15115	102635	3804	1	538	106978	**-91863**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատկիչ [5]	Դրամայնացման գործակից [6]
2010										
Դեկտեմբեր	507552	304324	128365	432689	88944	521633	389753	911386	1.80	1.27
2011										
Հունվար	463214	275472	112972	388444	93352	481796	394639	876435	1.89	1.26
Փետրվար	482014	276563	117936	394500	100647	495147	399295	894442	1.86	1.21
Մարտ	506325	278219	126771	404990	103198	508188	417671	925859	1.83	1.22
Ապրիլ	499650	285286	114356	399642	107185	506827	416526	923353	1.85	1.18
Մայիս	488892	293994	124315	418309	108084	526393	422169	948562	1.94	1.23
Հունիս	520180	301855	135612	437467	110781	548248	426001	974249	1.87	1.25
Հուլիս	530588	317819	145661	463480	119885	583364	427974	1011338	1.91	1.24
Օգոստոս	583369	320793	140498	461291	123500	584791	432064	1016855	1.74	1.23
Սեպտեմբեր	570596	320182	147707	467889	124014	591903	428620	1020523	1.79	1.27
Հոկտեմբեր	581505	327143	148539	475683	128375	604057	439331	1043388	1.79	1.26

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
600000
500000
400000
300000
200000
100000
0
08
09
10
11
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
05
06
07
08
09
10
11


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2010					
Հունվար	457685	259472	358736	416745	786819
Փետրվար	454592	263807	364495	426307	813713
Մարտ	481743	268524	362690	427897	826030
Ապրիլ	487664	269934	371903	435175	816383
Մայիս	468045	268863	374829	439881	809663
Հունիս	451251	270570	377333	445295	803968
Հուլիս	440056	266369	368734	439485	797370
Օգոստոս	435927	261879	368202	436157	789543
Սեպտեմբեր	431419	265420	373200	443501	801256
Հոկտեմբեր	435123	265816	374426	448448	813070
Նոյեմբեր	446763	269424	382503	458349	829154
Դեկտեմբեր	454628	276953	396429	477786	861865
2011					
Հունվար	462951	283399	399807	488359	883590
Փետրվար	485483	287137	404007	502933	901074
Մարտ	510185	300499	429155	536767	937147
Ապրիլ	514455	301550	423441	531265	941328
Մայիս	502408	308696	438441	549635	970128
Հունիս	531577	304447	436727	557528	977263
Հուլիս	535664	309033	453501	572453	1006786
Օգոստոս	582399	311513	452526	580230	1011209
Սեպտեմբեր	567787	315345	457833	573645	1019250
Հոկտեմբեր	574168	316396	457019	584024	1037173

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***453765***	***427700***	***414080***	***421131***	***387728***	***375129***	***403235***	***428520***	***475874***	***472452***	***456535***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***53787***	***35514***	***67934***	***85194***	***111921***	***113763***	***116945***	***102068***	***107496***	***98144***	***124969***
Կառավարություն	-95609	-126517	-103320	-92128	-87214	-78172	-83666	-101761	-100121	-100402	-91863
Բանկեր	57425	67249	67799	67220	88139	81801	86253	89258	92339	81772	91803
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	8023	6040	6035	5034	20613	9198	10770	11534	13524	8526	8531
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-12103	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	-9006	-3005
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	91971	94782	103455	110102	110996	110134	114358	114570	115277	116774	125030
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***507552***	***463214***	***482014***	***506325***	***499650***	***488892***	***520180***	***530588***	***583369***	***570596***	***581505***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	348165	312940	312393	312420	319858	330646	338923	355492	359785	359565	367609
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	57516	66614	94205	96027	103107	89876	89949	104595	105757	97553	106404
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	88237	70189	62502	82272	63722	55821	76634	56636	106630	104619	99782
Այլ հաշիվներ	13635	13471	12914	15606	12962	12549	14674	13864	11197	8858	7709
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	3906	3664	3324	8590	6125	6479	11338	11362	11033	8746	7105
Այլ հաշիվներ (արտարժույթով)	9729	9807	9590	7017	6837	6070	3336	2503	165	113	605
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	**-**	***-26065***	***-13620***	***7052***	***-33403***	***-12599***	***28106***	***25284***	***47354***	***-3422***	***-15917***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-18273***	***32420***	***17260***	***26727***	***1842***	***3182***	***-14877***	***5428***	***-9351***	***26825***
Կառավարություն	-	-30908	23197	11193	4914	9042	-5494	-18094	1640	-281	8539
Բանկեր	-	9824	550	-580	20919	-6337	4452	3006	3081	-10567	10031
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-1983	-5	-1001	15579	-11414	1572	764	1990	-4998	5
ավանդներ (-)	-	-12103	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2811	8673	6647	895	-863	4225	212	707	1497	8255
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-44338***	***18800***	***24312***	***-6676***	***-10757***	***31288***	***10408***	***52782***	***-12773***	***10908***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-35225	-547	27	7438	10787	8277	16569	4294	-220	8044
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	9098	27591	1822	7080	-13231	73	14646	1162	-8203	8850
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-18047	-7687	19770	-18550	-7900	20813	-19998	49994	-2010	-4837
Այլ հաշիվներ	-	-164	-557	2692	-2644	-414	2125	-810	-2667	-2339	-1149
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-241	-340	5266	-2465	354	4859	24	-329	-2287	-1641
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	78	-217	-2573	-180	-767	-2734	-833	-2338	-52	492
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	**-**	***-5.7***	***-3.2***	***1.7***	***-7.9***	***-3.2***	***7.5***	***6.3***	***11.1***	***-0.7***	***-3.4***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-34.0***	***91.3***	***25.4***	***31.4***	***1.6***	***2.8***	***-12.7***	***5.3***	***-8.7***	***27.3***
Կառավարություն	-	-32.3	18.3	10.8	5.3	10.4	-7.0	-21.6	1.6	-0.3	8.5
Բանկեր	-	17.1	0.8	-0.9	31.1	-7.2	5.4	3.5	3.5	-11.4	12.3
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
